



unicef 
for every child



ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ապրիլ, 2020թ.

Դպրոցների վերաբացման ծրագիր

Քովիդ-19 համավարակի հետևանքով դպրոցների փակումն ամբողջ աշխարհում աննախադեպ վտանգ է ներկայացնում երեխաների կրթության, պաշտպանության և բարեկեցության համար: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը օրերս կոչ է արել կառավարություններին և նվիրատու (դոնոր) կազմակերպություններին՝ առաջնահերթություն տալու բոլոր, այդ թվում՝ առավել մեկուսացված երեխաների կրթությանը, իսկ հեռավար ուսուցումը բարելավելու և դպրոցների վերաբացմանն օժանդակելու հարցում կառավարություններին աջակցելու նպատակով ստեղծվել է Կրթության հարցերով համաշխարհային կոալիցիան:

Թեև դեռևս չունենք բավարար փաստեր հիվանդության փոխանցման ռիսկի վրա դպրոցների փակման ազդեցությունը գնահատելու համար, սակայն դպրոցների փակման բացասական ազդեցությունը երեխաների անվտանգության, բարեկեցության և ուսումնառության վրա պատշաճ կերպով փաստագրված է: Կրթական ծառայությունների ընդհատումը ծանր, երկարատև հետևանքներ է թողնում տնտեսությունների և հասարակությունների վրա, այդ թվում՝ խորացող անհավասարություն, առողջության վատթարացում և սոցիալական համախմբվածության թուլացում: Բազմաթիվ երկրներում վիրուսի տարածվածության մասին տվյալները լիարժեք չեն, և որոշում ընդունողները պետք է իրատեսական գնահատականներ տան ոչ լրիվ տեղեկատվության ու անորոշության պայմաններում: Տեղական կառավարման մարմինները և գործընկերները պետք է համատեղ աշխատեն Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով սահմանված յուրաքանչյուր երեխայի կրթության, առողջության պահպանման և անվտանգության ապահովման իրավունքները խթանելու և պաշտպանելու ուղղությամբ: Երեխայի լավագույն շահը պետք է ունենա գերակա կարևորություն:

Կարանտինի ռեժիմը թուլացնելու հարցը դիտարկելիս երկրների ղեկավարներն առնչվում են բարդ և անորոշ հակադիր փաստարկների: Այս ծրագիրը տեղեկություններ է ապահովում որոշումների կայացման գործընթացին դպրոցները վերաբացելու ժամկետների վերաբերյալ, աջակցում է պետական կառավարման մարմինների նախապատրաստական աշխատանքներին և ուղղորդում իրականացման գործընթացը՝ որպես հանրային առողջապահության և կրթության ծրագրման ընդհանուր գործընթացների մաս: Իրավիճակին շարունակական հարմարեցումն անհրաժեշտ է տեղական պայմաններին արձագանքելու և յուրաքանչյուր երեխայի ուսումնառության, առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները բավարարելու համար:

Ինչո՞ւ վերաբացել դպրոցները

Դպրոցներում դասերի դադարեցումը կարող է խիստ բացասաբար ազդել երեխայի սովորելու ունակության վրա: Որքան երկար են մեկուսացված երեխաները մնում դպրոցից դուրս, այնքան պակասում է նրանց՝ դպրոց վերադառնալու հավանականությունը: Ամենահարուստ ընտանիքների համեմատ՝ ամենաաղքատ ընտանիքների երեխաներն արդեն իսկ գրեթե հինգ անգամ ավելի քիչ են հաճախում հիմնական դպրոց: Դպրոց

չհաճախելը մեծացնում է դեռահասության տարիքում հղիանալու, սեռական շահագործման, մանկական ամուսնության, բռնության և այլ սպառնալիքների վտանգը: Ավելին, դպրոցների երկարատև փակումը խաթարում է դպրոցում մատուցվող կենսական ծառայությունների՝ իմունականխարգելման, դպրոցական սննդի, հոգեկան առողջության և հոգեբանական աջակցության շարունակականությունը, ինչպես նաև կարող է առաջ բերել սթրես և անհանգստություն, որոնք պայմանավորված են հասակակիցների հետ շփումների բացակայության և սովորական ռեժիմի խախտման հանգամանքներով: Այս բացասական ազդեցություններն ավելի զգալի են մեկուսացված՝ հակամարտության կամ այլ երկարատև ճգնաժամից տուժած պետություններում ապրող, միգրանտ, հարկադրաբար տեղահանված, փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող և խնամքի հաստատություններում գտնվող երեխաների վրա: Դպրոցների վերաբացումը պետք է լինի անվտանգ և Քովիդ-19-ին երկրի առողջապահական համակարգի արձագանքին համահունչ՝ իրականացնելով աշակերտներին, աշխատակիցներին, ուսուցիչներին և նրանց ընտանիքներին պաշտպանելու համար անհրաժեշտ բոլոր խելամիտ միջոցառումները:

Ե՞րբ, որտե՞ղ և ո՞ր դպրոցները վերաբացել

Դպրոցների վերաբացման ժամկետների ընտրությունը պետք է ելնի երեխայի լավագույն շահից և հանրային առողջության ընդհանուր նկատառումներից, հիմնված լինի փոխկապակցված շահերի և ռիսկերի գնահատման վրա, հիմնավորված լինի միջոլորտային և իրավիճակով պայմանավորված ապացույցներով, որոնք ներառում են կրթական, հանրային առողջության և սոցիալ-տնտեսական գործոնները: Այս վերլուծությունը կօգնի նաև սահմանելու ռիսկի նվազեցման առաջնահերթ միջոցառումները: Որոշումները պետք է կայացվեն ենթաազգային շահագրգիռ կողմերի հետ միասին, ինչը հիմնված կլինի տեղական պայմանների վերլուծությունների վրա:

Վերաբացման վերաբերյալ որոշումներով երկրներից կպահանջվեն արագ հավաքագրել ամենակարևոր տեղեկություններն այն մասին, թե ինչպես են դպրոցները, ուսուցիչները, աշակերտները և համայնքները հաղթահարում դպրոցների փակման և համավարակի առաջ բերած խնդիրները: Դպրոցների և տեղական համայնքների ղեկավարների, ուսուցիչների, աշակերտների և ծնողների հետ անցկացված արագ հարցումները կարող են օգնել այս տեղեկությունների հավաքագրման գործում: Ապա որոշում ընդունողները պետք է գնահատեն ինչպես կարելի է յուրաքանչյուր իրավիճակում առանձին վերցված լավագույնս աջակցել ուսումնառությանը և բարեկեցությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հեռավար ուսուցման համեմատ դասարանային պայմաններում ուսուցման օգուտներին, որոնք պետք է դիտարկվեն դպրոցների վերաբացման հետ կապված ռիսկի գործոնների համատեքստում՝ նկատի առնելով դպրոց հաճախելու հետ կապված վարակման ռիսկերի վերաբերյալ ոչ համոզիչ ապացույցները:

- Համապատասխան ուսումնառության արդյունքներին (հիմնավոր, փոխանցելի, թվային, հատուկ աշխատանքային) հասնելու համար որքանո՞վ է կարևոր դասարանային պայմաններում ուսուցումը՝ հաշվի առնելով խաղերի միջոցով ուսուցման և հիմնավոր հմտությունների զարգացման համար ուսուցիչների հետ վաղ հասակի երեխաների անմիջական շփման կարևորությունը:

- Որքանո՞վ է մատչելի և հասանելի բարձր որակի հեռավար ուսուցումը (համապատասխան ուսումնառության արդյունքների, տարիքային խմբերի և մեկուսացված խմբերի համար):
- Հաշվի առնելով առտնին ճնշումը խնամակալների վրա և իրավիճակին բնորոշ այլ գործոնները՝ որքա՞ն ժամանակ կարելի է շարունակել հեռավար ուսուցմամբ կրթության կազմակերպման մոտեցումը՝ ապահովելով ուսման առաջադիմությունը և սոցիալական ու հուզական բարեկեցությունը:
- Խնամակալներն ունե՞ն առցանց հարթակների միջոցով ուսուցման ընթացքում երեխաներին առցանց ոտնձգություններից և գենդերային բռնությունից պաշտպանելու անհրաժեշտ գործիքները:
- Ինչպե՞ս է համավարակը և դրան արձագանքումը ազդել ուսումնառության ընթացքի կարևորագույն անցումային փուլերի վրա (պատրաստվածություն դպրոցին, ընդունելություն, տարրական դպրոցի ավարտ և փոխադրում, միջին դպրոցի ավարտ և փոխադրում, ավագ դպրոցի ավարտ և անցում բարձրագույն կրթության):
- Որքանո՞վ են ուսուցիչները և կրթության ոլորտի պատասխանատուները պատրաստ և ունակ հարմարվելու վարչական և ուսուցման տարբեր մոտեցումների: Արդյո՞ք նրանք ունակ են և պատրաստ իրականացնելու վարակի կանխարգելման ու վերահսկողության միջոցառումներ:
- Գոյություն ունե՞ն դպրոց չհաճախող երեխաների պաշտպանությանն առնչվող ռիսկեր, օրինակ՝ տղաների և աղջիկների հանդեպ ընտանեկան բռնության կամ սեռական շահագործման բարձր ռիսկը:
- Արդյո՞ք դպրոցների փակ լինելը խաթարում է դպրոցների մատուցած այլ օժանդակ, օրինակ՝ առողջապահական և սննդի ծառայությունների գործունեությունը:
- Ինչպե՞ս կարող է դպրոց չհաճախելը ազդել երեխաների սոցիալական վիճակի և բարեկեցության վրա:
- Ի՞նչ կարողություններ ունի դպրոցը անվտանգ աշխատանք ապահովելու և ռիսկերը մեղմելու համար (օրինակ՝ սոցիալական հեռավորություն (դասասենյակի չափերն ըստ աշակերտների թվի), ջրամատակարարման, սանիտարահիգիենիկ հարմարությունները և նորմերը):
- Ի՞նչ աստիճանի փոխազդեցություն կա աշակերտների և բարձր ռիսկային խմբերի, օրինակ՝ տարեցների և ուղեկցող հիվանդություններ ունեցողների միջև: Եթե փոխազդեցությունների աստիճանը բարձր է, կարո՞ղ են ձեռնարկվել դրանք վերացնելու համարժեք միջոցառումներ:
- Ինչպե՞ս են աշակերտները հասնում դպրոց և վերադառնում դպրոցից:
- Որո՞նք են համայնքի հետ կապված ռիսկի գործոնները, որոնք առնչվում են համաճարակաբանության, հանրային առողջության և առողջապահության


համակարգի կարողությունների, բնակչության խտության և սոցիալական հեռավորության ու պատշաճ հիգիենայի կանոնների պահպանման հարցերին:

Իրավիճակին հատուկ օգուտների և ռիսկերի վերլուծությունը հնարավորություն է տալիս սահմանելու վերաբացման համար դպրոցների (կամ դրանց որոշ բաղադրիչների), դպրոցներում և համայնքներում ռիսկերը մեղմելու միջոցառումների և հեռավար ուսուցման համար ուշադրություն պահանջող ոլորտների առաջնահերթություններ:

Ինչպե՞ս վերաբացել դպրոցները

Վերաբացման համար ընտրված դպրոցների պատրաստվածության մակարդակը գնահատելու և իրազեկման պլանավորման համար պետք է կիրառվեն վեց առանցքային ուղղություններ.

գործողությունների անվտանգ կազմակերպում, ուսուցում, առավել մեկուսացվածների ընդգրկում և բարեկեցություն / պաշտպանություն: Գործնական նկատառումները և ֆինանսավորման պահանջները միասին ձևավորում են նպաստավոր միջավայր, որն անհրաժեշտ է մյուս ուղղություններից յուրաքանչյուրին աջակցելու համար:



Տեղական կարիքներին և պայմաններին արձագանքելու տեսանկյունից առանցքային են լինելու իրավիճակին հարմարեցումը և համապատասխանեցումը, հատկապես այն իրավիճակներում, որտեղ առկա են բազմաթիվ խնդիրներ (օրինակ՝ տարածքի խիտ բնակեցվածություն, ջրի սակավություն, հակամարտություն և այլն): Վերլուծությունը պետք է համեմատի վիճակը նախահամարակային պայմանների հետ՝ հաշվի առնելով թե՛ ռեսուրսների սակավության պայմաններում առկա սահմանափակումները, թե՛ գործողությունների կազմակերպման և ուսումնառության պայմանները բարելավելու ընթացիկ նպատակները:

Արձագանքումը պետք է կատարի ուսումնառության արդյունքները բարելավելու, կրթության հավասար մատչելիությունը բարձրացնելու և երեխաների պաշտպանության, առողջության պահպանման և անվտանգության ապահովման համակարգը հզորացնելու կատալիզատորի դեր:

	Նախքան վերաբացումը	Վերաբացման գործընթացի մաս	Դպրոցները վերաբացվել են
	Մշակել դպրոցական կրթության բարելավմանն ուղղված անհրաժեշտ կարևոր գործողությունների ծրագրեր, ընթացակարգեր և ֆինանսական պլաններ, որոնք կենտրոնանում են գործողությունների անվտանգ կազմակերպման, ներառյալ հեռավար ուսուցման պրակտիկայի ամրապնդման վրա:	Մեկուսացված և դպրոց չհաճախող երեխաներին վերընդգրկելու նպատակով որդեգրել կանխազդիչ մոտեցումներ: Ռիսկերը նվազեցնելու համար ներդրումներ կատարել ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգերում, բաց թողնված դասաժամերը լրացնելու նպատակով կենտրոնանալ լրացուցիչ կրթության վրա:	Ակտիվորեն մշտադիտարկել առողջության ցուցանիշները՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով բարեկեցությանը և պաշտպանությանը: Իրականացնել մասնագիտական-մանկավարժական վերապատրաստումներ, հարմարեցնել հեռավար կրթությունը համակցված դասավանդման և խառը ուսուցման հետ՝ ներառելով գիտելիքներ վարակի փոխանցման և կանխարգելման մասին:
<p>Գործողությունների անվտանգ կազմակերպում</p> <p>Մանրամասն խորհուրդների համար տե՛ս IASC դպրոցներում Քովիդ-19 կանխարգելմանն ու վերահսկողությանն ուղղված հիմնական գործողությունների ուղեցույցը</p>	<p>Ապահովել դպրոցները բացելու մասին որոշում կայացնելու հստակ հանրային իրազեկման ուղեցույցներ: Կարող է առաջանալ դպրոցները աստիճանաբար վերաբացելու անհրաժեշտություն՝ սկսելով վարակի փոխանցման ամենացածր ցուցանիշ և ամենացածր տեղայնացված ռիսկ ունեցող տարածքներից:</p> <p>Դպրոցների վերաբացումը կարող է նաև լինել փուլային, օրինակ՝ նախ սահմանափակվել շաբաթական մի քանի օրով կամ միայն որոշակի դասարանների համար: Ազգային քաղաքականությունը պետք է հստակ ցուցումներ ապահովի ենթաազգային մակարդակում գնահատումների և որոշումների կայացման համար:</p>	<p>Կրթության ոլորտի պատասխանատու մարմինները պետք է հզորացնեն հաղորդակցման և համակարգման մեխանիզմները, որոնք խթանում են կրթական հարցերի շուրջ համայնքների, ծնողների և երեխաների հետ երկխոսությունը և համագործակցությունը</p>	<p>Մշակել համայնքում վարակի նոր բռնկման հետևանքով դպրոցների վերափակման և վերաբացման վերաբերյալ որոշումների կայացման մոդել:</p>
	Մշակել ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումների վերաբերյալ հստակ և հասկանալի կանոններ, այդ թվում՝ խոշոր կուտակում ենթադրող միջոցառումների արգելում, դպրոցական օրվա փոփոխվող սկիզբ և ավարտ, սնվելու ընդմիջման փոփոխվող ժամեր, դասերի անցկացում ժամանակավոր տարածքներում կամ բացօթյա, դասերի կազմակերպում հերթափոխով՝	Ավելացնել անվտանգ ջրամատակարարում, լվացարաններ, մաքրող նյութեր ունեցող դպրոցների թիվը, հնարավորության դեպքում կառուցել աղջիկների և տղաների համար առանձին զուգարաններ կամ ավելացնել դրանց թիվը՝ նախատեսելով դաշտանային ցիկլի հիգիենայի ապահովման հարմարություններ:	

	Նախքան վերաբացումը	Վերաբացման գործընթացի մաս	Դպրոցները վերաբացվել են
	<p>դասարաններում աշակերտների թիվը կրճատելու համար:</p> <p>Մշակել հիգիենային միջոցառումների հստակ կանոններ, որոնք ներառում են ձեռքերի լվացումը, հագի և փոշտալու վարվելակարգը, պաշտպանիչ միջոցների օգտագործումը, տարածքների մաքրման աշխատանքների և սննդի անվտանգ պատրաստման կանոնները:</p>	<p>Ֆիզիկական հեռավորության և դպրոցում հիգիենայի կանոնները կիրառելու նպատակով վերապատրաստել վարչական աշխատակիցներին և ուսուցիչներին, անհրաժեշտության դեպքում համալրել դպրոցի աշխատակազմը: Հավաքարարների համար իրականացնել պարապմունքներ ախտահանման կանոնների ուսուցման հարցերով և հնարավորության սահմաններում ապահովել նրանց անհատական պաշտպանության միջոցներով:</p>	<p>Մաքրման և ախտահանման աշխատանքների ինտենսիվությունը և հաճախականությունն ավելացնելու և թափոնների կառավարման պրակտիկան բարելավելու համար շեշտադրել վարքային փոփոխության կարևորությունը:</p>
	<p>Առողջական վիճակի պատճառով բացակայությունները հաշվի առնելու և հեռավար ու խառը ուսուցման կազմակերպմանն աջակցելու նպատակով ուսուցիչների արհմիությունների հետ համատեղ վերանայել անձնակազմի և հաճախելիության հարցերով գործողությունների ծրագրերը:</p> <p>Գործողությունների ծրագրերը պետք է պաշտպանեն տարիքի կամ ուղեկցող հիվանդությունների պատճառով բարձր ռիսկային խմբում գտնվող ուսուցիչներին և մյուս աշխատակիցներին և աշակերտներին, ընդգրկեն բացակա ուսուցիչներին փոխարինելու և դպրոց չհաճախող աշակերտներին աջակցելու նպատակով հեռավար կրթությունը շարունակելու ծրագրեր, որոնք հնարավորինս հաշվի կառնեն անհատական հանգամանքները:</p>	<p>Դպրոցների ղեկավարներին տրամադրել ուսուցիչների կամ աշակերտների հիվանդանալու դեպքում կիրառվող ընթացակարգի հստակ ուղեցույց: Ուղեցույցը պետք է ներառի աշակերտների և աշխատակիցների առողջական վիճակի մշտադիտարկում, մշտական կապի պահպանում առողջապահության տեղական պատասխանատուների հետ, արտակարգ իրավիճակներում գործելու պլանի և կոնտակտային տվյալների թարմացում:</p> <p>Դպրոցները պետք է նաև ապահովեն հիվանդ աշակերտներին և աշխատակիցներին ժամանակավոր առանձնացնելու համար տարածք առանց խարանի: Ընթացակարգերը ներկայացնել աշխատակիցներին, ծնողներին և աշակերտներին՝ խորհուրդ տալով հիվանդ աշակերտներին և աշխատակիցներ մնալ տանը:</p>	

	Նախքան վերաբացումը	Վերաբացման գործընթացի մաս	Դպրոցները վերաբացվել են
	<p>Դպրոցների ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգերում հրատապ ներդրումներ կատարելու համար սահմանել արձագանքման և հետևանքների վերացման ֆինանսական միջոցների հատկացման կարգ: Առաջնահերթություն տալ դպրոցները մանրագին մաքրելու և ախտահանելու համար նյութերի և ծառայությունների, արտակարգ իրավիճակներում գործելու ծրագրերի և ֆոնդերի ծախսերին:</p> <p>Քովիդ-19-ին արձագանքելու գործողությունները կիրառել որպես հնարավորություն՝ վերանայելու դպրոցի տարածքները արտակարգ իրավիճակներում օգտագործելու (որպես ապաստարան, բժշկական հաստատություն, կարանտինի վայր և այլն) գործելակերպերը:</p>	<p>Դպրոցական կրթության համակարգի բոլոր մակարդակներում և ամբողջ աշխատակազմի համար խրախուսել հիգիենայի, մասնավորապես ձեռքերը լվանալու, հազի և վրժտալու վարվելակարգի կանոնները պահելը:</p>	<p>Խրախուսել ձեռքերի ախտահանիչ նյութերի օգտագործումը և շեշտադրել կտորից դիմակները ճիշտ կրելու կարևորությունը, եթե դա պահանջում են տեղական կառավարման մարմինները: Հիգիենայի կանոնների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լայնորեն մատչելի և հասանելի լինի, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով կամ Բրեյլի այբուբենով, ինչպես նաև երեխաներին հասկանալի լեզվով:</p>
Ուշադրություն դարձնել ուսուցմանը	<p>Վերապատրաստել և աջակցել ուսուցիչներին և դպրոցների ղեկավարներին ուսուցումը հեռավար եղանակով կազմակերպելու և դպրոցների փակ լինելու ընթացքում աշակերտներին սատարելու համար: Դա կարող է ընդգրկել բջջային հարթակներում հատուկ խմբերի ստեղծում կամ հեռախոսագանգերի հավելյալ րոպեների տրամադրում ծնողների հետ կապ պահպանելու համար:</p>	<p>Համընդհանուր կրթության նպատակներին համապատասխան վերանայել ընդունելության կանոնակարգերը և պահանջները՝ վերացնելով արգելքները և նվազեցնելով ընդունելության պահանջները:</p> <p>Մահմանել կամ վերանայել այլընտրանքային ուսուցման համարժեքության չափանիշները և պաշտոնական ճանաչումը:</p>	<p>Ավելացնել ներդրումները հեռավար ուսուցման մեջ. (1) դպրոցների փակման հետագա փուլերին պատրաստվելու համար, (2) ուսուցումն ու դասավանդումը բարելավելու համար այնտեղ, որտեղ դպրոցները մնում են փակ, (3) խառը ուսուցման մոդելների օգնությամբ դասաժամերը լրացնելու համար այնտեղ, որտեղ դպրոցներն աշխատում են ոչ լրիվ կամ այլ կերպ հարմարեցված աշխատաժամանակով:</p> <p>Ուսուցիչների մասնագիտական զարգացման և վերապատրաստման համար նախատեսել լրացուցիչ ֆինանսավորում:</p>

	Նախքան վերաբացումը	Վերաբացման գործընթացի մաս	Դպրոցները վերաբացվել են
	<p>Մշակել ուսումնական այլընտրանքային օրակարգեր, որոնք կհիմնվեն հանրային առողջության տարբեր սցենարների վրա և հաշվի կառնեն հեռավար ուսուցման համար կիրառվող մեթոդները:</p>	<p>Վերապատրաստել ուսուցիչներին ուսումնական գործընթացը վերականգնելու և հոգեկան առողջության խնդիրներ ու հոգեբանական աջակցության կարիք ունեցող աշակերտների հետ աշխատելու համար: Վերապատրաստումները պետք է ակնհայտորեն բարելավեն աշակերտների գրելու, կարդալու և հաշվելու, ինչպես նաև նրանց սոցիալ-հուզական հիմնական կարիքները բավարարելու ուսուցիչների ունակությունը, հատկապես այն դպրոցներում, որտեղ մեծ տոկոս են կազմում ռիսկային խմբի աշակերտները: Ուսուցիչները պետք է պատրաստվեն տարիքով պայմանավորված վարքային և կոգնիտիվ փոփոխությունները տարբերակելու և ուսուցման հարցերով տարիքին համապատասխան աջակցություն տրամադրելու համար:</p>	<p>Դիտարկել նվազ կարևոր, օրինակ՝ փոխադրման քննություններից հրաժարվելու հարցը՝ ռեսուրսները կենտրոնացնելով կարևոր (օրինակ՝ դպրոցի ավարտական կամ բուհի ընդունելության) քննությունները օրինական, արժանահավատ և արդար կերպով կազմակերպելու վրա՝ հաշվի առնելով ֆիզիկական հեռավորության և առողջապահական այլ պահանջները: Հնարավորության դեպքում դիտարկել ընդհանուր հիմունքներով փոխադրման հնարավորությունը և գնահատել աշակերտների գիտելիքները դպրոցների փակումից հետո՝ անհրաժեշտության դեպքում վերաուսուցում իրականացնելու նպատակով:</p>
	<p>Գնահատել ազդեցությունները մասնավոր կրթության ոլորտի վրա և դիտարկել հնարավոր արձագանքները, ներառյալ հանրային ծառայությունների ընդլայնումը, մասնավոր ծառայությունների պետական ֆինանսավորումը կամ այլ պատշաճ արձագանքները:</p>	<p>Իրականացնել լրացուցիչ կրթական լայնածավալ ծրագրեր, որոնք ուղղված կլինեն ուսուցման բացթողումները լրացնելուն և դպրոցների փակումից հետո գիտելիքների անհավասարության խորացումը կանխելուն՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարրական դպրոցի երեխաների գրելու, կարդալու և հաշվելու կարողություններին և հաշմանդամություն ունեցող երեխաների համար հարմարեցումներին: Զուգահեռ կարող են գործադրվել արագացված ուսուցման մոդելներ՝ նախկինում դպրոց չհաճախող և պատանեկան հասակի երեխաներին ընդգրկելու համար:</p>	<p>Կիրառել ուսուցիչներին աջակցելու նորարարական մեթոդներ, օրինակ՝ վերապատրաստման առցանց դասընթացներ, թրեյնինգներ՝ նրանց մասնագիտական կարողությունների արագ ձեռքբերման և զարգացման նպատակով: Թրեյնինգներն ու վերապատրաստումները կարող են նաև ընդգրկվել ուսուցիչների մանկավարժական ֆորմալ կրթության և առանց աշխատանքից կտրվելու վերապատրաստման ծրագրերում:</p>

	Նախքան վերաբացումը	Վերաբացման գործընթացի մաս	Դպրոցները վերաբացվել են
Բարեկեցություն և պաշտպանություն		<p>Ընդլայնել հոգեկան առողջության և հոգեբանական աջակցության ծառայությունների մատուցումը՝ ուղղված խարանման/ խտրականության դեմ վերացմանը և աջակցելու երեխաներին ու նրանց ընտանիքներին՝ հաղթահարելու համավարակի շուրջ շարունակվող անորոշությունը:</p>	<p>Տարածել հստակ, հակիրճ և ճշգրիտ տեղեկություններ Բովիդ-19-ի մասին, կանոնարկել վախի և մտահոգության մասին տեղեկատվությունը, խրախուսել ինքնախնամքի ռազմավարությունները ոչ միայն աշակերտների և նրանց ընտանիքների, այլև ուսուցիչների և դպրոցների մյուս աշխատակիցների համար:</p>
	<p>Ուսուցչական կադրերի արտահոսքը կանխելու և նրանց բարեկեցությունն ապահովելու համար երաշխավորել նրանց աշխատավարձերի առանց ընդհատումների և ուշացումների վճարումը, մասնավորապես որոշակի ժամկետով պայմանագրեր ունեցող ուսուցիչների համար:</p>	<p>Ուսուցիչների և այլ աշխատակիցների համար իրականացնել ռիսկերի գնահատում (հաշվի առնելով տարիքը, քրոնիկական հիվանդությունները և ռիսկի այլ գործոնները), ապա կիրառել աստիճանաբար դպրոց վերադառնալու մոտեցում:</p>	<p>Ուսումնասիրել և հզորացնել ուղղորդման համակարգերը, մասնավորապես ծանր դեպքերի համար: Ապահովել, որ ծառայություններ մատուցողները տեղեկացված լինեն խնամքի այլ ծառայությունների, այդ թվում՝ գենդերային բռնության/սեռական շահագործման և բռնության կանխարգելման, սեռական և վերարտադրողական առողջապահական ծառայություններ ուղղորդելու մասին:</p>
		<p>Վերահաստատել կենսական ծառայությունների կանոնավոր և անվտանգ մատուցումը: Դա ընդգրկում է, բայց չի սահմանափակվում սննդի ապահովման, ջրամատակարարման և առողջապահական ծառայություններով, որոնք են դպրոցական սննդի, պատվաստումների ծրագրերը և պաշտպանիչ ուղղորդումները (հոգեկան առողջության խնդիրներ ու հոգեբանական կարիքների, գենդերային բռնության, չարաշահման և այլ դեպքերում) և հաշմանդամություն ունեցող երեխաների համար հատուկ ծառայությունները:</p>	<p>Այն դեպքերում, երբ ծառայությունները դպրոցում մատչելի չեն, հզորացնել ուղղորդման համակարգերը, այդ թվում՝ երիտասարդների հարմարեցված և լիարժեք հասանելի սեռական և վերարտադրողական առողջապահական ծառայություններ:</p>

	Նախքան վերաբացումը	Վերաբացման գործընթացի մաս	Դպրոցները վերաբացվել են
Հասնել ամենամեկուսացվածներին	<p>Կրթության ֆինանսավորումն ուղղել ճգնաժամից առավել տուժած, օրինակ՝ բանաձևի հիման վրա ֆինանսավորմամբ, որը առաջնահերթությունը տալիս է առավել մեկուսացվածներին:</p> <p>Մեխանիզմների առումով դիտարկել միանվագ դրամաշնորհների տրամադրումը դպրոցներին և դրամական փոխանցումները (պայմանական կամ ոչ պայմանական) աշակերտներին:</p>	<p>Հնարավորության դեպքում հրաժարվել ուսման վարձերից և այլ ծախսերից (դպրոցական համազգեստի և այլն) և վերացնել այլ արգելքները՝ ընդգրկվածությունը առավելագույն ցուցանիշների հասցնելու համար:</p>	<p>Առաջնահերթ ֆինանսավորում տրամադրել վերականգնողական նոր կարիքներին աջակցելու համար, մասնավորապես սոցիալապես անապահով աշակերտների: Մոտեցումներից մեկը ըստ աշակերտների թվի բյուջեի կատարողականների կատեգորիան է կամ ժամանակավոր վերանայումը, ինչը կարող է ապահովել շարունակական ֆինանսավորումը և կանխել առաջադիմությամբ կամ անհամապատասխանությամբ պայմանավորված նվազեցումները:</p>
	<p>Մեկուսացված խմբերի՝ նախկինում դպրոց չհաճախող, տեղահանված/միգրանտ և ազգային փոքրամասնությունների երեխաների համար հասանելիությունը բարելավելու նպատակով հարմարեցնել դպրոցների բացման գործելակերպերը և ընթացակարգերը: Ապահովել կարևոր տեղեկատվության և իրազեկման միջոցների բազմազանությունը՝ դրանք հասանելի դարձնելով համապատասխան լեզուներով, մատչելի ձևաչափերով և հարմարեցնելով թիրախային խմբերին:</p> <p>Համայնքների ավելի լայն ընդգրկվածության և ուղղորդված բարելավումների միջոցով հատուկ միջոցներ ձեռնարկել դպրոց չհաճախելու ընթացքում աղջիկների և մեկուսացված այլ խմբերի պաշտպանության հետ կապված ռիսկերը մեղմելու համար:</p>	<p>Ձեռնարկել հատուկ միջոցառումներ համայնքների ավելի լայն ընդգրկվածության միջոցով աղջիկների՝ դպրոց վերադարձին աջակցելու համար:</p>	<p>Ապահովել ուսումնական նյութերի/ հարթակների, տեղեկատվության, ծառայությունների և հարմարությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: Բնակչության առողջության մասին տեղեկատվությունը և համակարգի հետ կապը պետք է հասանելի լինեն բազմակի, մատչելի ձևաչափերով, որոնք հարմարեցված կլինեն լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին:</p> <p>Անհրաժեշտ փոփոխություններ կատարել ջրամատակարարման, սանիտարահիգիենիկ ծառայությունների հասանելիությունն ապահովելու համար: Ծրագրել դպրոցների վերափակման դեպքում օժանդակ ծառայությունների շարունակականությունը:</p>

Օժանդակ նյութեր

WFP, FAO, UNICEF, Mitigating the effects of the COVID-19 pandemic on food and nutrition of schoolchildren <https://www.wfp.org/publications/mitigating-effects-covid-19-pandemic-food-and-nutrition-schoolchildren>

UNESCO, COVID 19 Education Response – Education Issue Note N° 7.1 – April 2020 <https://en.unesco.org/covid19/educationresponse>

UN Special Rapporteur on the right to adequate housing, COVID-19 Guidance Note Protecting Residents of Informal Settlements https://unhabitat.org/sites/default/files/2020/04/guidance_note_-_informal_settlements_29march_2020_final3.pdf

World Bank resources on education during COVID-19 landing page: <https://www.worldbank.org/en/data/interactive/2020/03/24/world-bank-educationand-covid-19>

Հղումներ

IASC, Guidance on COVID-19 Prevention and Control in Schools <https://www.unicef.org/reports/key-messages-and-actions-coronavirus-disease-covid-19-prevention-and-control-schools>

United Nations, Policy Brief: The Impact of COVID-19 on children 15 APRIL 2020 https://www.un.org/sites/un2.un.org/files/policy_brief_on_covid_impact_on_children_16_april_2020.pdf

World Bank, We should avoid flattening the curve in education – Possible scenarios for learning loss during the school lockdowns, https://blogs.worldbank.org/education/we-should-avoid-flattening-curve-education-possible-scenarios-learning-loss-during-school?CID=WBW_AL_BlogNotification_EN_EXT)

World Bank, The COVID-10 Pandemic: Shocks to Education and Responses, Draft Paper

World Health Organization, Considerations in adjusting public health and social measures in the context of COVID-19 Interim guidance 16 April 2020 https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331773/WHO-2019-nCoV-Adjusting_PH_measures-2020.1-eng.pdf

World Health Organization, Non-pharmaceutical public health measures for mitigating the risk and impact of epidemic and pandemic influenza (2019) https://www.who.int/influenza/publications/public_health_measures/publication/en/

World Health Organization, Reducing transmission of pandemic (H1N1) 2009 in school settings https://www.who.int/csr/resources/publications/reducing_transmission_h1n1_2009.pdf

[Կորոնավիրուսի վերաբերյալ ՅՈՒՆԻՍԵՖ-ի լրահոսի կայքէջ](#)